159. ՈՐՍԿԱՆ ՄԱՐԹԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին մարթ։ Էս մարթս աման օր քյինում ա իլա̈լ որս անում։ Ըստրա ըղաքավը մին ճեյրան տես ա իլա̈լ քյինում, աեն։ Էս մարթը աման օր քյինում ա իլա̈լ որ փռնի։ Մին վախտ հետան վաղ ա տըվլալ, էս ճեյրանը քյինացալ ա մին պուճ նի մտալ։ Էս մարթը քյինացալ ա տեսալ՝ մին հո̈ւլո̈ւմա̈լա̈քյ ախճիկյ։ Պիրալ ա ո̈ւրա̈ն կնեկյը շինա̈լ։

Էս կնեկյն էնչանք շատ պարերաշտ ա իլա̈լ, որ հրեշտակների նըհետ ա իլա̈լ խոսում։ Էս կնեկյը մին ախճիկյ ա պերալ, որ կանց մորը նախշուն։ Էս մարթս թամք շինիլիս վախտը էս ախճիկը նի յա ինկյա̈լ, կոտրալ ա, հա̈ըը մին պուճուր թխալ ա։ Էն սըհաթը մարը ըխճկանը եր ա կալալ, թռչա̈լ երկյինքյը։ Էս մարթը շատ ման ա եկալ, ման, քիթա̈լ չի։ Մին տարե լա̈ց ա իլա̈լ։ Մին տարուցը ետնան էլլա ըսկսալ ա թամք շինիլ։ Մին թամք ա շինա̈լ, մին իրեսին կնկանը պատկերը քաշալ, մին իրեսին ըխճկանը հու տարալ ծախ։ Մին մարթ եկալ ա առալ։ Էս մարթն ասալ ա. «Մին ըստեղ պեր, էտ թամքին մեխը ծոռ ա, շինեմ»։ Նա էլ պերալ ա։ Զաքյո̈ւշավը թխալ ա, թամքը շաղ ա եկալ։ Էս որսկան մարթն ասալ ա. «Լա̈վ ա, քյինա̈, որ կըշինեմ, կիկյա̈ս տանես»։ Նա էլ քյինացալ ա։ Էլլա մին տարի չըրչարվալ ա, չըրչարվալ, շինալ՝ ո̈ւրո̈ւր ըրալ։ Էլլա մին օրիշ մարթ եկալ ա առալ, թա տանի։ Էլլա ասալ ա. «Պեր էտ թամքին մեխը ծոռ ա, շինեմ»։ Էլլա թխալ ա, շաղ ա եկալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինկյնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին։